



# Ուղեցույց

Հաշմանդամություն ունեցող եւ հոգեբուժարանին  
մեջ բուժուող անձեր

Յունուար, 2020թ.

Սոյն ուղեցույցը հովանավորուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան Հանրութեան հետ կապերու գրասենեակի տրամադրած դրամաշնորհի շրջանակէն ներս: Այստեղ արտայայտուած է հեղինակի դիրքորոշումը, որուն համընկնումը Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան դիրքորոշումին հետ՝ պարտադիր չէ:

## **1. Հանրային պաշտպանի գրասենեակը հաշմանդամություն ունեցող ո՞ր անձերուն կը տրամադրէ իրաւաբանական անվճար օգնութիւն**

Հանրային պաշտպանի գրասենեակը իրաւաբանական անվճար օգնութիւն կը տրամադրէ 1-ին եւ 2-րդ խումբի հաշմանդամություն ունեցող անձերուն: Անձին հաշմանդամութեան խումբ կը տրուի ՀՀ բժշկա-ընկերային փորձաքննութեան գործակալութեան եւ անոր տարածքային մարմիններուն կողմէ: Ըստ ՀՀ աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան [ինտերնետային կայքի](#)՝ կը գործէ այդպիսի 27 յանձնաժողով:

## **2. Ո՞վ հաշմանդամ կը համարուի**

Հաշմանդամ կը համարուի այն անձը, որ առողջութեան խաթարումով պայմանաւորուած, կենսագործունէութեան սահմանափակումներու հետեւանքով ունի ընկերային պաշտպանութեան անհրաժեշտութիւն:

## **3. Ինչպէ՞ս կրնայ քաղաքացին դիմել բժշկա-ընկերային փորձաքննութեան**

Բժշկա-ընկերային փորձաքննութիւն առաջին անգամ անցընելու համար քաղաքացին պէտք է դիմէ իր հաշուառման կամ փաստացի բնակութեան վայրը սպասարկող բժշկական կազմակերպութիւն (տարածքային բուժարան՝ փոլիքլինիքա):

Մինչ բժշկա-ընկերային փորձաքննութիւն իրականացուիլը, քաղաքացին բժշկական կազմակերպութեան մէջ պէտք է անցնի անհրաժեշտ ախտորոշիչ, բուժական եւ վերականգնողական միջոցառումները եւ աւարտէն ետք միայն կազմակերպութիւնը կրնայ ուղեգրել անձը բժշկա-ընկերային փորձաքննութեան, իսկ տեւական բուժում պահանջող հիւանդութիւններու պարագային՝ մասնագէտները անձը կրնան ուղեգրել փորձաքննութեան՝ բուժման միջոցին, սակայն ոչ վաղ՝ քան բուժման անցնելէ 3 ամիս ետք (բացառութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան առողջապահութեան եւ Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարներու հաստատած՝ վերականգնման հեռանկարի բացակայութիւն ունեցող հիւանդութիւններու ցանկին):

**4. Ինչպե՞ս կ'իրականացուի բժշկա-ընկերային փորձաքննությունը՝ անձր հաշմանդամ ճանչնալու համար**

Բժշկա-ընկերային փորձաքննությունը կ'իրականացնէ փորձաքննուողի հաշուառման կամ փաստացի բնակութեան վայրը սպասարկող բժշկա-ընկերային փորձաքննական յանձնաժողովը: Բժշկա-ընկերային փորձաքննություն անցնելու համար անձը յանձնաժողովի նախագահին պէտք է ներկայացնէ գրաւոր դիմում եւ իր անձնագիրը: Բժշկա-ընկերային փորձաքննութեան դիմումին կը կցուին նաեւ հիւանդութեան, վնասուածքի, խեղման հետեւանքով մարմնի անդամներուն կայուն պաշտօններու խանգարումով պայմանաւորուած առողջութեան խաթարումը հաստատող բժշկական փաստաթուղթերը, իսկ առաջին անգամ դիմելու պարագային՝ նաեւ անձի բուժումը կամ բուժսպասարկումը իրականացնող բժշկական կազմակերպութեան ուղեգիրը, ուր կը նշուին քննուող անձի ախտորոշումը, կիրառուած բուժական եւ վերականգնողական միջոցառումներու արդիւնքները: Այն պարագային, երբ անձը, ելլելով առողջական վիճակէն, չի կրնար ներկայանալ փորձաքննությունը անցընելու վայրը եւ անոր մասին նշած է դիմումին մէջ, ապա յանձնաժողովը բժշկա-ընկերային փորձաքննությունը կրնայ իրականացնել անձին գտնուած վայրին մէջ (բնակութեան վայր կամ հիւանդանոց):

**5. Հնարաւոր է արդեօք անձի բժշկա-ընկերային փորձաքննությունը իրականացնել անձի ներկայացուցիչին գրաւոր դիմումին հիման վրայ՝ ուղղուած բժշկա-ընկերային փորձաքննությունը իրականացնող յանձնաժողովի նախագահին**

Այն պարագային, երբ քննուող անձը ինքնուրոյն չի կրնար ներկայացնել փաստաթուղթերը, ապա ասիկա կրնայ ընել անոր ներկայացուցիչը: Եթէ դիմորդը ներկայացուցիչն է, ապա կը ներկայացնէ նաեւ իր անձնագիրը: Մինչեւ 16 տարեկան երեխաներու համար կը ներկայացնէ ծննդեան վկայականը, ծնողներէն մէկուն կամ խնամակալի (հոգաբարձուի) անձնագիրը, իսկ 16-18 տարեկան երեխաները դիմումը կը գրեն անձամբ՝ ներկայացնելով անձր հաստատող փաստաթուղթ:

**6. Որո՞նք են բժշկա-ընկերային փորձաքննությունը իրականացնող յանձնաժողովի նախագահին յետագայ քայլերը՝ անձին կողմէ դիմումն ու համապատասխան փաստաթուղթերը ներկայացնելէ ետք**

Յանձնաժողովի նախագահը, ուսումնասիրելով ներկայացուած դիմումն ու համապատասխան փաստաթուղթերը եւ հաւաստիանալով փաստաթուղթերու լիարժէքութեան վրայ, կը յարուցէ վարչական վարոյթ՝ անձին կամ անոր ներկայացուցիչին պատշաճ ձեւով ծանուցելով փորձաքննութեան օրուան, վայրի եւ ժամի մասին: Յանձնաժողովի նախագահը նշանակուած փորձաքննութեան օրը ներկայացուած փաստաթուղթերը կը ներկայացնէ յանձնաժողովի անդամներուն: Յանձնաժողովը կը գննէ անձը (բացառութեամբ հեռակայ փորձաքննութեան պէտքերու), կը ձեւակերպէ փորձաքննական ախտորոշումը, կը գնահատէ անոր կենսագործունէութեան սահմանափակման աստիճանը, կը քննարկէ ստացուած արդիւնքները եւ անոնց հիման վրայ կ'ընդունի որոշում:

Յանձնաժողովի նախագահը (ստորաբաժանումի ղեկավարը) անձը հաշմանդամ ճանչնալու կամ չճանչնալու կամ ժամանակաւոր անաշխատունակութեան ժամկէտը երկարաձգելու կամ անձի միայն մասնագիտական աշխատունակութեան կորուստի աստիճանը (տոկոսներով) սահմանելու վերաբերեալ որոշումը կը հրապարակէ փորձաքննութիւն անցած անձի կամ անոր ներկայացուցիչի ներկայութեամբ:

## **7. Անձը հաշմանդամ ճանչնալու պարագային, որո՞նք են բժշկա-ընկերային փորձաքննութիւնը իրականացնող յանձնաժողովի գործողութիւնները**

Անձը հաշմանդամ ճանչնալու պարագային՝ յանձնաժողովի կողմէ եռօրեայ ժամկէտի մէջ կը կազմուի անձի վերականգնողական անհատական ծրագիր, գոր կը հաստատէ յանձնաժողովի նախագահը: Վերականգնողական անհատական ծրագիրը անձի բժշկա-ընկերային փորձաքննական որոշումին հետ միասին՝ օրէնքով սահմանուած կարգով կը յանձնէ անոր կամ անոր ներկայացուցիչին:

Անձի վերականգնողական անհատական ծրագիրը եռօրեայ ժամկէտի մէջ կ'ուղարկուի նաեւ Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարի սահմանած համալիր (ինտեգրուած) ընկերային ծառայութիւններու տարածքային կեդրոններ:

Բժշկա-ընկերային փորձաքննական որոշումին մասին յանձնաժողովը ծանուցում կ'ուղարկէ անձին սպասարկող բժշկական կազմակերպութեան:

Փորձաքննական որոշումին քաղուածքը կամ ծանուցումը մէկշաբաթեայ ժամկետով կ'ուղարկուի անձի հաշուառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում կամ փաստացի բնակութեան վայրին մէջ սպասարկող կենսաթոշակ նշանակելու իրաւասութիւն ունեցող մարմնին:

## **8. Որո՞նք են հաշմանդամութեան սահմանման ժամկետները**

Հաշմանդամութեան սահմանման սկիզբը կը համարուի յանձնաժողովին մէջ անձի կամ անոր ներկայացուցիչի գրաւոր դիմումին մուտքագրման օրը: Փորձաքննական որոշումը ուժի մէջ կը մտնէ բժշկա-ընկերային փորձաքննութիւն անցած անձի կամ անոր ներկայացուցիչի կողմէ որոշումը ստանալու յաջորդ օրէն:

Անձը կը համարուի հաշմանդամ մինչեւ բժշկա-ընկերային փորձաքննական որոշումին մէջ նշուած ժամկետին յաջորդող ամսուան 1-ը:

## **9. Ինչպէ՞ս եւ ո՞ր պարագաներուն կ'իրականացուի հաշմանդամի վերափորձաքննութիւնը**

Հաշմանդամ ճանչցուած անձը կրկին անգամ բժշկա-ընկերային փորձաքննութեան (այսուհետեւ՝ վերափորձաքննութիւն) կ'ենթարկուի անձին կամ անոր ներկայացուցիչին գրաւոր դիմումին հիման վրայ կամ բժշկա-ընկերային փորձաքննութեան ոլորտին մէջ իրաւասու պետական մարմնին նախաձեռնութեամբ:

Վերափորձաքննութիւնը կ'իրականացուի հաշմանդամութեան խումբի կամ «հաշմանդամ երեխայ» կարգավիճակի համար սահմանուած ժամկետը լրանալու, անձի առողջական վիճակը վատթարանալու կամ մարմնի տուեալ գործառոյթի վերականգնման, իսկ փորձաքննական որոշումին համար հիմք հանդիսացող փաստաթուղթերուն մէջ կեղծիք յայտնաբերուելու կամ հաշմանդամութեան խումբի որոշումին սահմանուած կարգի խախտումի պարագային՝ նաեւ բժշկա-ընկերային փորձաքննութեան ոլորտին մէջ իրաւասու պետական մարմնի նախաձեռնութեամբ: Վերափորձաքննութիւն կրնայ իրականացուիլ նաեւ դատարանի որոշումին կամ վճիռին հիման վրայ:

10. Կրնա՞ն արդեօք բողոքարկուիլ բժշկա-ընկերային փորձաքննության ոլորտին մէջ իրաւասու պետական մարմիններու որոշումները՝ կապուած հաշմանդամութեան այս կամ այն խումբը, հաշմանդամ երեխայի կարգավիճակը սահմանելու վերաբերեալ

Բժշկա-ընկերային փորձաքննության ոլորտին մէջ իրաւասու պետական մարմիններու որոշումները՝ անձը հաշմանդամ ճանչնալու կամ չճանչնալու, ինչպէս նաեւ հաշմանդամութեան այս կամ այն խումբը, հաշմանդամ երեխայի կարգավիճակը սահմանելու վերաբերեալ, կրնան օրէնսդրութեամբ սահմանուած կարգով բողոքարկուիլ վերադասութեան կամ դատական կարգով:

11. Ինչպէ՞ս կ'իրականացուի յանձնաժողովի ընդունած որոշումներուն վերանայումը վերադասութեան կարգով

Յանձնաժողովին ընդունած որոշումները վերադասութեան կարգով կրնան վերանայուիլ՝

1) գործակալութեան պետին յանձնարարութեամբ՝ վերափորձաքննութեան բաժնին կողմէ.

2) Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարին յանձնարարութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան համապատասխան ստորաբաժանումին կողմէ:

Ինչպիսի՞ ժամկետներ սահմանուած են օրէնքով անձին կողմէ բժշկա-ընկերային փորձաքննական որոշումները բողոքարկելու համար, եւ որո՞ւն կը ներկայացուի բողոքը

Անձը վեցամսեայ ժամկետի մէջ կրնայ յանձնաժողովի ընդունած փորձաքննական որոշումը բողոքարկել գործակալութեան պետին, որուն յանձնարարութեամբ անձը կը վերափորձաքննուի վերափորձաքննութեան բաժնին կողմէ: Վերափորձաքննութեան աւարտին համապատասխան ստորաբաժանումը կ'ընդունի որոշում:

Գործակալութեան վերափորձաքննութեան բաժնին կողմէ ընդունուած որոշումին հետ համաձայն չըլլալու պարագային անձը մեկամսեայ ժամկետի մէջ կրնայ զայն բողոքարկել Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան: Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան համապատասխան ստորաբաժանումը կ'ուսումնասիրէ փորձաքննուած անձի բողոքը՝ ներառեալ բժշկա-ընկերային փորձաքննական գործն ու

անոր կից ներկայացուած փաստաթուղթերը քննութեան կ'ենթարկէ եւ կու տայ համապատասխան եզրակացութիւն:

Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան համապատասխան ստորաբաժանումին առարկութիւններու շրջանակներուն մէջ՝ յանձնաժողովին կողմէ վերափորձաքննութեան աւարտին ընդունուած նոր որոշումին հետ համաձայն չըլլալու պարագային՝ անձը կրնայ որոշումը օրէնքով սահմանուած ժամկետին մէջ բողոքարկել Հայաստանի Հանրապետութեան աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարին:

## **12. Ինչպէ՞ս կ'իրականացուի հաշուառում չունեցող կամ օտարերկրեայ քաղաքացիներու բժշկա-ընկերային փորձաքննութիւնը**

Հաշուառում չունեցող անձերը կրնան ենթարկուիլ բժշկա-ընկերային փորձաքննութեան՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակութեան վայրէն: Օտարերկրեայ պետութեան քաղաքացիները Հայաստանի Հանրապետութեան մէջ կրնան անցընել բժշկա-ընկերային փորձաքննութիւն, եթէ տուեալ պետութեան հետ Հայաստանի Հանրապետութիւնը ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

## **13. Ինչպէ՞ս կ'իրականացուի հաշմանդամի բժշկա-ընկերային փորձաքննութիւնը, եթէ ան բուժման նպատակով կը գտնուի Հայաստանի Հանրապետութենէն դուրս**

Եթէ հաշմանդամը բուժման նպատակով կը գտնուի Հայաստանի Հանրապետութենէն դուրս, ապա անոր բժշկա-ընկերային փորձաքննութիւնը, հաշմանդամի կամ անոր ներկայացուցիչի դիմումին համաձայն, կ'իրականացուի հեռակայ՝ բժշկա-ընկերային փորձաքննութեան նախկին փաստաթուղթերու եւ այն բժշկական կազմակերպութեան տուած փաստաթուղթերու հիման վրայ, ուր հաշմանդամը կը գտնուի բուժման մէջ:

## **14. Ի՞նչ ժամկետով կը սահմանուի 1-ին եւ 2-րդ խումբերու հաշմանդամութիւնը**

1-ին խումբի հաշմանդամութիւնը կը սահմանուի երկու տարի ժամկետով, իսկ 2-րդ խումբի հաշմանդամութիւնը՝ մէկ տարի ժամկետով:

## **15. Ո՞ր պարագաներուն կը սահմանուի անժամկետ հաշմանդամութիւն:**

Հաշմանդամութեան խումբը կը սահմանուի անժամկետ՝  
ա) օրէնքով տարիքային կենսաթոշակի իրաւունք տուող տարիքը լրացած անձերու,

բ) վերականգնողական միջոցառումներու հեռանկարի բացակայութեան, հաշմանդամի ընկերային անբաւարարութեան վերացման կամ նուազեցման անկարելիութեան պարագային, որ հետեւանք է մարմնական անդառնալի փոփոխութիւններով եւ մարմնի անդամներու պաշտօններու խանգարումով առողջութեան խաթարումով պայմանաւորուած կենսագործունէութեան կայուն սահմանափակման,

գ) իրականացուած վերականգնողական միջոցառումներու անարդիւնաւէտութեան պարագային, որ կը բերէ հաշմանդամի մշտական ընկերային պաշտպանութեան անհրաժեշտութեան (առնուազն 7 տարի բժշկա-ընկերային փորձաքննութեան ոլորտին մէջ իրաւասու պետական մարմիններու դիտման պայմաններու մէջ):

## **16. Ինչպիսի՞ արտօնութիւններ սահմանուած են օրէնքով 1-ին եւ 2-րդ խումբերու հաշմանդամութիւն ունեցող անձերու համար**

1-ին եւ 2-րդ խումբերու հաշմանդամութիւն ունեցող անձերու համար կ'երաշխաւորուի պետական պիւտճէի միջոցներու հաշուոյն որակեալ անվճար կամ արտօնեալ պայմաններով բժշկական օգնութիւն պետական բժշկական հիմնարկներու մէջ, ինչպէս նաեւ անվճար դեղորայք ստանալու արտոնութիւն: 1-ին եւ 2-րդ խումբերու հաշմանդամները իրաւունք ունին բուժական հիմնարկներու եւ դեղարաններու մէջ առաջնահերթ կարգով՝ սպասարկումով ապահովուելու:

Ընդունելութեան քննութիւնները դրական գնահատականներով յանձնած 1-ին եւ 2-րդ խումբերու հաշմանդամները եւ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձեր կ'ընդունուին պետական բարձրագոյն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատութիւններու անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնուազն անցումային միաւորներ հաւաքելու պարագային:

Բարձրագոյն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններու անվճար համակարգին մէջ գտնուող 1-ին եւ 2-րդ խումբի հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձերը կը տեղափոխուին տուեալ ուսումնական հաստատութեան վճարովի



համակարգ, եթե ուսումնառության ընթացքին կատարուած բժշկա-ընկերային վերափորձաքննութեան արդիւնքներով չեն ճանչցուած իբրեւ հաշմանդամ:

Պետական բարձրագոյն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններու վճարովի համակարգին մէջ գտնուող անձերը ուսումնառութեան ընթացքին հաշմանդամ երեխայի կամ 1-ին եւ 2-րդ խումբի հաշմանդամի կարգավիճակ ստանալու պարագային կը տեղափոխուին տուեալ ուսումնական հաստատութեան անվճար համակարգ:

**17. Արդեօք «Հաշմանդամ երեխայ» կարգավիճակ, ինչպէս նաեւ հաշմանդամութեան 3-րդ խումբ ունեցող անձերը ունի՞ն իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք**

ՀՀ բժշկա-ընկերային փորձաքննութեան գործակալութեան եւ անոր տարածքային մարմիններու կողմէ հաշմանդամ ճանչցուած անձին կը տրուի հաշմանդամութեան խումբ (1-ին, 2-րդ եւ 3-րդ խումբ), իսկ մինչեւ 18 տարեկան երեխաներուն՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ: Հանրային պաշտպանի գրասենեակի կողմէ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք ունեցող անձերու շրջանակը նախատեսուած է օրէնսդրութեամբ: «Հաշմանդամ երեխայ» կարգավիճակ կամ հաշմանդամութեան 3-րդ խումբ ունեցող անձերը ներառուած չեն շրջանակի մէջ: Ուստի, անոնք կրնան ստանալ այդպիսի օգնութիւն, եթէ կը հանդիսանան այդ շրջանակին մէջ ներառուած անձերէն ռեւէ մէկը:

**18. Արդեօք հոգեկան խանգարում ունեցող անձերը ունի՞ն իրաւունք՝ Հանրային պաշտպանի գրասենեակի կողմէն ստանալու իրաւաբանական անվճար օգնութիւն**

Հանրային պաշտպանի գրասենեակը կը տրամադրէ իրաւաբանական անվճար օգնութիւն՝

ա) հոգեբուժական կազմակերպութիւններու մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձերու.

բ) անգործունակ ճանչցուող անձերու:

Ուստի, եթէ հոգեկան խանգարում ունեցող անձը կը բուժուի հոգեբուժական կազմակերպութեան մէջ, կամ ունի իբրեւ անգործունակ ճանչցուող անձի

դատավարական կարգավիճակ, ան ունի իրաւունք՝ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու:

**19. Ի՞նչ իրաւունքներ ունին հոգեբուժական կազմակերպութիւններու մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձերը**

Հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձերը իրաւունք ունին՝

- 1) հաստատելու նամակագրական կապ.
- 2) օգտուելու հեռաձայնային կապէն.
- 3) հանդիպելու այցելուներու հետ.
- 4) ունենալու եւ ձեռք բերելու առաջին անհրաժեշտութեան իրեր ու պարագաներ, օգտուելու անձնական հագուստէն.
- 5) հաղորդակցուելու թերթերու եւ լրագիրներու միջոցով.
- 6) կոչուելու իր անունով կամ մականունով,
- 7) օգտուելու ընկերային ապահովութեան իրաւունքէն.
- 8) ստանալու իրաւաբանական օգնութիւն.
- 9) օգտուելու անձնական անվտանգութեան ապահովման իրաւունքէն.
- 10) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզուով տեղեկութիւններ ստանալու իր իրաւունքներու, ազատութիւններու եւ պարտականութիւններու վերաբերեալ.
- 11) օգտուելու իր նկատմամբ բարեկիրթ, անձը չնուստացնող վերաբերմունքէն.
- 12) տալու համաձայնութիւն եւ որեւէ փուլի հրաժարելու բուժական մեթոտներէն եւ միջոցներէն, եթէ անոնք կը կիրառուին գիտական կամ փորձարարական նպատակներով, կ'ուղեկցուին լուսա-, տեսա- եւ կինոնկարահանումներով.
- 13) պահանջելու իր ընտրած հոգեբոյժ մասնագէտի մասնակցութիւնը իր հոգեկան վիճակի ու անկէ բխող բոլոր բժշկական հարցերու վերաբերեալ մասնագիտական

եզրակացութիւն տալու համար ստեղծուած հոգեբուժական յանձնաժողովի աշխատանքներուն.

14) օգտուելու առողջութեան պահպանման իրաւունքէն, ինչպէս նաեւ ստանալու բուարար սնունդ, բժշկական անյետաձգելի օգնութիւն, ինչպէս նաեւ զննութեան ենթարկուելու իր նախընտրած բժշկի կողմէ սեփական միջոցներու հաշուոյն.

15) հանգիստի, ներառեալ՝ բացօթեայ զբօսանքի կամ մարմնամարզութեան եւ ուրժամեայ գիշերային քունի իրաւունքը, երբ կ'արգելուի զայն ներգրաւել բժշկական կամ այլ գործողութիւններու մէջ.

16) կնքելու քաղաքացիաիրաւական գործարքներ, բացառութեամբ քաղաքացիական օրէնսդրութեամբ սահմանուած սահմանափակումներու.

17) անձնական ընդունելութեան խնդրանքով դիմելու հոգեբուժական կազմակերպութեան ղեկավարին, անոր գործունէութեան նկատմամբ հսկողութիւն եւ վերահսկողութիւն իրականացնող մարմիններուն.

18) հետազօտման, բուժման, դուրսգրման, օրէնքով սահմանուած իր իրաւունքներու պաշտպանութեան եւ ազատութիւններու խախտման վերաբերեալ դիմումներով, բողոքներով, անձամբ կամ պաշտպանի կամ օրինական ներկայացուցիչի միջոցով դիմելու հոգեբուժական կազմակերպութեան ղեկավարին, անոր վերադաս մարմնին, դատարան, դատախազութիւն, մարդու իրաւունքներու պաշտպանին, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններուն, հասարակական միատրումներուն եւ կուսակցութիւններուն, զանգուածային լրատուութեան միջոցներուն, ինչպէս նաեւ մարդու իրաւունքներու եւ ազատութիւններու պաշտպանութեան միջազգային մարմիններուն կամ կազմակերպութիւններուն:

## **20. Որո՞ն համաձայնութեամբ հոգեկան խանգարումով տառապող անձին բուժում կը տրուի**

Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կը կատարուի անոր կամ անոր օրինական ներկայացուցիչի գրաւոր դիմումին հիման վրայ:

Բժիշկը պարտաւոր է հոգեկան խանգարումով տառապող անձին կամ անոր օրինական ներկայացուցիչին տեղեկութիւններ տրամադրել հոգեկան խանգարման բնոյթին, առաջարկուող բուժման նպատակին, մեթոտաբանութեան, տեւողութեան, ինչպէս նաեւ կողմնակի ազդեցութեան եւ ակնկալուող արդիւնքներուն մասին: Անոնց

վերաբերեալ բժշկական փաստաթուղթերու մէջ (բժշկական տետրակի կամ հիւանդութեան պատմութեան նկարագրութեան մէջ) գրանցում կը կատարուի:

Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կրնայ իրականացուիլ առանց անոր կամ անոր օրինական ներկայացուցիչի համաձայնութեան՝ միայն օրէնքով նախատեսուած բժշկական բնոյթի հարկադրական միջոցներու կիրառման եւ ոչ յօժարակամ հիւանդանոց պառկեցնելու պարագաներուն:

**21. Ո՞ր պարագային կարելի է հոգեկան խանգարումներով տառապող անձը առանց իր կամ օրինական ներկայացուցիչի համաձայնութեան հիւանդանոց տեղափոխել**

Հոգեկան խանգարումներով տառապող անձը առանց իր կամ օրինական ներկայացուցիչի համաձայնութեան կարելի է հիւանդանոց տեղափոխել հոգեբուժական յանձնաժողովի կողմէ պարտադիր հետազօտուելէ ետք, եթէ՝

- 1) ան վտանգ կը ներկայացնէ իր կամ այլ անձերու համար, կամ
- 2) բուժում չիրականացնելը կամ բուժումը դադրեցնելը կրնայ վատթարացնել հիւանդին առողջական վիճակը:

Հոգեբուժական յանձնաժողովի կողմէ հիւանդանոց տեղափոխուլու մասնագիտական հիմնաւորութիւնները հաստատելու պարագային համապատասխան հոգեբուժական կազմակերպութեան տնօրէնը հոգեկան խանգարումներով տառապող անձին կողմէ բուժումէն հրաժարելու կամ բուժումը դադրեցնելու պահանջ ներկայացնելէ ետք՝ 72 ժամուան ընթացքին, կը դիմէ դատարան՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիական դատավարութեան օրէնսգրքով սահմանուած կարգով անձին հոգեբուժական հիւանդանոցային ոչ յօժարակամ բուժման ենթարկելու համար:

**22. Արդեօք հոգեկան խանգարում ունեցող այն անձերը, որոնք չեն բուժուիր հոգեբուժական կազմակերպութեան մէջ եւ չունին անգործունակ ճանչցուող անձի դատավարական կարգավիճակ , ունի՞ն Հանրային պաշտպանի գրասենեակին կողմէ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք**

Հանրային պաշտպանի գրասենեակին կողմէ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու իրաւունք ունեցող անձերու շրջանակը նախատեսուած է օրէնսդրութեամբ: Հոգեկան խանգարում ունեցող անձերը, որոնք կա՛մ կը բուժուին հոգեբուժական կազմակերպութեան մէջ, կա՛մ ունին անգործունակ ճանչցուող անձի դատաւարական կարգավիճակ, ներառուած են այդ շրջանակին մէջ: Հոգեկան խանգարում ունեցող անձերը կրնան ստանալ իրաւաբանական անվճար օգնութիւն, եթէ կը հանդիսանան շրջանակին մէջ ներառուած անձերէն ոեւէ մէկը:

### **23. Ո՞վ կը նկատուի անգործունակ ճանչցուող անձ**

Անգործունակ ճանչցուող անձի դատաւարական կարգավիճակ ունին ան, որ անգործունակ ճանչնալու վերաբերեալ յարուցուած է գործ`անոր ընտանիքի անդամի, խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմնի կամ հոգեբուժական կազմակերպութեան դիմումին հիման վրայ՝ ՀՀ քաղաքացիական դատաւարութեան օրէնսգիրքով սահմանուած կարգով, եւ գործի քննութիւնը դեռ չէ աւարտուած:

Անձը կը նկատուի անգործունակ ճանչցուած, եթէ առկայ է օրինական ուժի մէջ մտած վճիռ՝ զայն անգործունակ ճանչնալու վերաբերեալ: Քաղաքացին կրնայ անգործունակ ճանչցուիլ, եթէ հոգեկան խանգարման հետեւանքով չի կրնար հասկնալ իր գործողութիւններուն նշանակութիւնը կամ ղեկավարել զանոնք:

### **24. Ո՞րն է հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձերուն Հանրային պաշտպանի գրասենեակի կողմէ իրաւաբանական անվճար օգնութիւն տրամադրելու առիթը**

Հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձին Հանրային պաշտպանի գրասենեակի կողմէ իրաւաբանական անվճար օգնութիւն տրամադրելու առիթը գրաւոր դիմումն է: Այն պարագային, երբ հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձը ունի քրեական գործով կասկածեալի կամ մեղադրեալի դատաւարական կարգավիճակ, անոր օգնութիւն տրամադրելու առիթը քրեական վարոյթը իրականացնող մարմնի որոշումն է կամ դիմումը: Քրեական վարոյթ իրականացնող մարմինը դատարանն է, իսկ քրեական գործի մինչդատական վարոյթին մէջ՝ հետաքննութեան մարմինը, քննիչը, դատախազը: Ինչ կը վերաբերի այն պարագային,

երբ անձը ունի դատապարտեալի կարգավիճակ, օգնութիւն տրամադրելու առիթը դատարանի որոշումն է: Վերջապէս, եթէ անձը ունի անգործունակ ճանչցուողի դատավարական կարգավիճակ, անոր օգնութիւնը տրամադրելու առիթը դատարանի որոշումն է:

**25. Ո՞վ կրնայ Հանրային պաշտպանի գրասենեակ գրաւոր դիմում ներկայացնել՝ հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձի անունով**

Հոգեբուժական կազմակերպութեան մէջ բուժուող հոգեկան խանգարումներ ունեցող անձերը գրաւոր դիմում կրնան ներկայացնել անձամբ, իսկ այն պարագային, երբ անձը ճանչցուած է անգործունակ, դիմումը կը ներկայացուի անձի անունով, սակայն խնամակալի կողմէ: Խնամակալները անգործունակ ճանչցուած անձերու ներկայացուցիչները օրէնքի ուժով եւ անոնց անունով ու ի շահ անոնց՝ կը կնքեն բոլոր անհրաժեշտ գործարքները, ինչպէս նաեւ՝ կը ներկայացնեն դիմում Հանրային պաշտպանի գրասենեակ: Խնամակալութեան կարիք ունեցող անձի նկատմամբ, մինչեւ խնամակալ նշանակելը, խնամակալի պարտականութիւնները կ'իրականացնէ խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմինը: Այսինքն, եթէ անգործունակ ճանչցուած անձի նկատմամբ խնամակալ նշանակուած չէ, Հանրային պաշտպանի գրասենեակ դիմումը կը ներկայացուի խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմնի կողմէ:

**26. Ո՞վ անգործունակ ճանչցուած անձին համար խնամակալ կը նշանակէ**

Հոգեկան խանգարման հետեւանքով դատարանով անգործունակ ճանչցուած քաղաքացիներու համար կը սահմանուի խնամակալութիւն: Խնամակալութեան կարիք ունեցող անձի բնակութեան վայրի խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմինը խնամակալ կը նշանակէ մէկ ամիսէն, սկսած այն օրէն, երբ դատարանը տեղեկացուցած է խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմնին՝ քաղաքացի անգործունակ ճանչնալու մասին վճիռը օրինական ուժի մէջ մտնելու մասին:

**27. Որո՞նք են խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմինները**

Խնամակալութեան եւ հոգաբարձութեան մարմինները համայնքներու ղեկավարներն են (գիւղապետ, քաղաքապետ): Երեւանի մէջ խնամակալութեան եւ

հոգաբարձության մարմնին վերապահուած լիազօրութիւնները քաղաքապետի անունով կ'իրականացնեն Երեւանի վարչական շրջաններու ղեկավարները:

**28. Ի՞նչ փաստաթուղթեր պէտք է ներկայացնէ 1-ին կամ 2-րդ խումբի հաշմանդամութիւն ունեցող անձը՝ իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու դիմումին կից**

1-ին կամ 2-րդ խումբի հաշմանդամութիւն ունեցող անձը իրաւաբանական անվճար օգնութիւն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենեակ պէտք է ներկայացնէ հաշմանդամութեան փաստաթուղթը (հաշմանդամութեան վկայական, հաշմանդամութեան մասին տեղեկանք) եւ անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր):